

**PL-MBD-020-2 Քաղաքականություն
«Հակակոռուպցիոն օրենսդրության ապահովում»**

ՆՓ-ի կիրառման համար պատասխանատու	Համապատասխանության համակարգող
---	-------------------------------

1. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փաստաթղթի նպատակը	<p>Սույն Քաղաքականությամբ ընկերությունը, նրա ղեկավարությունը սահմանում են հետևյալ նպատակները.</p> <ul style="list-style-type: none"> • մշակել Ընկերության կորպորատիվ մշակույթի կատարելագործմանը, կորպորատիվ կառավարման լավագույն փորձի ներդրմանն ու զարգացմանը, ինչպես նաև աշխատանքային պատասխանատու վարքագծի ստանդարտների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, • ապահովել Ընկերության կողմից օրինականության, թափանցիկության և սոցիալական պատասխանատվության սկզբունքների պահպանումը՝ բարձր պահելով իր հեղինակությունը պետության, բաժնետերերի, հաճախորդների, գործընկերների, մրցակիցների և ընդհանրապես հասարակության շրջանում, • սահմանել Ընկերության և (կամ) աշխատակիցների անունից (նկատմամբ) կոռուպցիայի ցանկացած դրսևորման կանխարգելման սկզբունքներ, ինչպես նաև Ընկերության կողմից աշխարհի ցանկացած երկրում տնտեսական գործունեություն իրականացնելիս կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության պահանջների պահպանմանն ուղղված սկզբունքներ:
Փաստաթղթի հակիրճ նկարագրություն	<ul style="list-style-type: none"> • Հակակոռուպցիոն օրենսդրության պահպանման քաղաքականությունը հանդիսանում է ընդհանուր կորպորատիվ նշանակության փաստաթուղթ: • Սույն Քաղաքականությունը սահմանում է «Մոբիդրամ» ՓԲԸ-

	ի (այսուհետ՝ Կազմակերպություն), ղեկավար մարմինների անդամների և աշխատակիցների կողմից, ինչպես նաև «Մոբիդրամ» ՓԲԸ-ի շահերից ելնելով գործող բոլոր երրորդ անձանց կողմից «Մոբիդրամ» ՓԲԸ-ի նկատմամբ կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության դրույթների պահպանման հիմնական սկզբունքներն ու պահանջները:
Մուտքի սահմանափակում	Չկա

2. ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ և ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ


Մույն փաստաթուղթը կանոնակարգում է հետևյալ ստորաբաժանումների և պաշտոնատար անձանց, այդ թվում՝ ղերերի պատասխանատուների գործունեությունը.

Ստորաբաժանման/պաշտոնի/դերի անվանում
«Մոբիդրամ» ՓԲԸ բոլոր ստորաբաժանումները և դրանց ղեկավարները

3. ՏԵՐՄԻՆՆԵՐԻ, ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ և ԴԵՐԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ

3.1. Տերմինների և հապավումների սահմանումներ

Տերմինի անվանում	Հապավում	Տերմինի սահմանում (հապավումների վերծանում)
Ներմուծված սահմանումներ.		
Աշխատակիցներ (սույն Քաղաքականության նպատակներով)		Ընկերության հետ աշխատանքային հարաբերություններ ունեցող կամ Ընկերության հետ քաղիրավական պայմանագիր կնքած ֆիզիկական անձինք
Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրություն		Ռուսաստանի հակակոռուպցիոն օրենսդրություն, FCPA, The Bribery Act, ինչպես նաև այլ պետությունների նմանատիպ օրենսդրություններ, որոնց տարածքում Ընկերության Բաժնետեր Ընկերությունը ծավալում է իր տնտեսական գործունեությունը:
Foreign Corrupt Practices Act	FCPA	Foreign Corrupt Practices Act 1977 (ԱՄՆ օրենք «Ձեղծարարությունների և կոռուպցիայի կանխարգելման արտերկրում գործող օրենք» ընդունված ԱՄՆ Կոնգրեսի կողմից 1977թ.)
The Bribery Act		The Bribery Act 2010 (Մեծ Բրիտանիայի «Կաշառակերության մասին» օրենք՝ ընդունված Մեծ Բրիտանիայի Խորհրդարանի կողմից 2010թ.)
Պետական մարմիններ, հաստատություններ և ձեռնարկություններ		ՀՀ և այլ պետությունների, դրանց սուբյեկտների պետական իշխանության մարմիններ և ինքնակառավարման մարմիններ (ներառյալ նախարարություններ, պետական ծառայություններ, գործակալություններ, պետական գործակալություններ և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներ), քաղաքական կուսակցություններ, ինչպես նաև ուղղակի կամ անուղղակի կերպով պետության կողմից հսկվող իրավաբանական անձինք
Հակակոռուպցիոն համապատասխանություն		Ընկերության նկատմամբ կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրության պահանջների պահպանման նպատակով

	Քաղաքականություն «Հակակոռուպցիոն օրենսդրության պահպանում»	PL-MBD-020-2
		Ներքին կիրառման համար

Տերմինի անվանում	Հապավում	Տերմինի սահմանում (հասպալումների վերձանում)
(հակակոռուպցիոն համապատասխանության համակարգ)		Ընկերության կողմից մշակված միջոցառումների և գործընթացների համակարգ
Գործող սահմանումներ.		
Ընկերություն		«Մոբիդրամ» ՓԲԸ՝ որի միակ բաժնետերը հանդիսանում է «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն, որը իր հերթին հանդիսանում է «ՄՏՍ» ՀԲԸ, «Մոբիլնիե ՏելեՄիստեմի» հանրային բաժնետիրական ընկերության դուստր ձեռնարկությունը
Պետական պաշտոնատար անձ	ՊՊԱ	Ցանկացած, տեղական և կամ այլ պետության օրենսդիր, գործադիր, վարչական կամ դատական մարմնում կամ միջազգային կազմակերպությունում ցանկացած պաշտոն զբաղեցնող նշանակված կամ ընտրված անձ; պետության (այդ թվում՝ Պետական մարմնի, հաստատության կամ ձեռնարկության) համար որևէ հրապարակային գործառույթ իրականացնող ցանկացած անձ, առաջատար քաղաքական գործիչներ, քաղաքական կուսակցությունների պաշտոնատար անձինք, ներառյալ՝ քաղաքական պաշտոնների հավակնորդ թեկնածուներ, դեսպաններ, արդյունաբերության կամ բնական մենաշնորհների ազգայնացված ոլորտների ազդեցիկ պաշտոնյաներ, Պետական մարմինների, հաստատությունների և ձեռնարկությունների ղեկավարներ կամ աշխատակիցներ, ներառյալ՝ բժիշկներ, զինվորական ծառայողներ, վարչական ծառայողներ և այլն, անձինք, ովքեր, հայտնի է, որ կապված են պետական պաշտոնատար անձանց հետ բարեկամական, ընկերական կամ գործնական կապերով

3.2. Դերերի սահմանում

Դերի անվանում	Դերի սահմանում
Ներմուծված սահմանումներ.	
Չկա	Չկա
Գործող սահմանումներ.	
Չկա	Չկա

4. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Քաղաքականության նպատակներին հասնելու համար սույն Քաղաքականությունը լուծում է հետևյալ գործնական խնդիրները.

- Ընկերության ղեկավարներին, ստորաբաժանումների ղեկավարներին և աշխատակիցներին տեղեկացնել իրենց պարտականությունների մասին, այն է՝ իմանալ և անվերապահորեն հետևել սույն Քաղաքականությունում շարադրված Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության պահպանման հիմնական սկզբունքներին, ինչպես նաև իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ և ընթացակարգեր Ընկերության կողմից կոռուպցիայի կանխարգելման նպատակով,

- սահմանել Ընկերության Ղեկավարության պարտականությունը՝ ապահովելու և վերահսկելու Կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրությանը համապատասխանության արդյունավետ համակարգի մշակումն ու ներդրումը,
- կանխարգելել Ընկերության ղեկավարների, ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների մասնակցությունը կոռուպցիոն գործունեությանը,
- նվազագույնի հասցնել Ընկերությանը ղեկավարներին, ստորաբաժանումների ղեկավարներին և աշխատակիցներին քրեական, վարչական կամ քաղաքացիաիրավական պատասխանատվության ենթարկելու ռիսկը,
- Ընկերության ղեկավարների, ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների համար ձևավորել Ընկերության քաղաքականության համանման ընկալում կոռուպցիայի ցանկացած ձևերի և դրսևորումների չթույլատրման վերաբերյալ,
- կատարելագործել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների հավաստիության և թափանցիկության ապահովման, ինչպես նաև վերջինիս ակտիվների օրինական և արդյունավետ օգտագործման ուղղությամբ իրականացվող միջոցառումները:

5. ԿԻՐԱՌԵԼԻ ՀԱԿԱԿՈՐՈՒՊՑԻՈՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն Քաղաքականությունը մշակվել է համաձայն ՀՀ Քրեական օրենսգրքի, Foreign Corrupt Practices Act 1977-ի (ԱՄՆ օրենք «Զեղծարարությունների և կոռուպցիայի կանխարգելման արտերկրում գործող օրենք»՝ ընդունված ԱՄՆ Կոնգրեսի կողմից 1977թ.), The Bribery Act 2010-ի (Մեծ Բրիտանիայի «Կաշառակերության մասին» օրենք՝ ընդունված Մեծ Բրիտանիայի Խորհրդարանի կողմից 2010թ.) պահանջների, կարգավորող մարմինների առաջարկների, ինչպես նաև համաձայն Ընկերության Կանոնադրության, Գործնական վարքագծի և էթիկայի կանոնների և այլ ներքին փաստաթղթերի:

6. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ

Ընկերությունը հետևում է հակակոռուպցիոն օրենսդրության պահպանման և էթիկական գործնական վարքագծի սկզբունքներին բոլոր տեսակի գործնական հարաբերություններում և անկախ այն երկրից, որի տարածքում Ընկերությունը ծավալում է իր տնտեսական գործունեությունը: Սույն Քաղաքականության սկզբունքներն ու պահանջները պարտադիր կերպով պետք է իրականացվեն բոլոր աշխատակիցների, ղեկավար մարմինների անդամների և ներկայացուցիչների կողմից:

Ընկերությունն ընդունել է կոռուպցիայի ցանկացած ձևի և դրսևորման չթույլատրման սկզբունքն ինչպես ամենօրյա գործունեության մեջ, այնպես էլ ռազմավարական նախագծերի իրականացման ժամանակ:

Այդպիսով, Ընկերության բոլոր աշխատակիցներին և ղեկավար մարմինների անդամներին, ինչպես նաև Ընկերության անունից և/կամ վերջինիս շահերից ելնելով գործող ցանկացած երրորդ կողմի արգելվում է.

- Առաջարկել, խոստանալ, թույլատրել կամ իրականացնել վճարումներ դրամական միջոցների կամ ցանկացած այլ արժեքների տեսքով, ներառյալ, բայց չսահմանափակվելով, գործնական նվերներ, ծախսերի փոխհատուցում, զեղչեր, ժամանց և այլն, ինչպես նաև ցանկացած ֆինանսական կամ այլ օգուտ կամ առավելություն ցանկացած Պետական պաշտոնատար անձի, առևտրային կազմակերպության ներկայացուցչի կամ ցանկացած այլ անձի, ինչը նպատակ ունի ազդել իր գործողությունների վրա (ապահովել անգործություն) և խրախուսել կատարելու պաշտոնեական պարտականությունները ոչ պատշաճ ձևով և/կամ ստանալ ոչ պատշաճ առևտրային առավելություն,
- Առաջարկել, տրամադրել կաշառք կամ օժանդակել կաշառք տալուն. վճարումներ, որոնք կատարվել են պետական պաշտոնյանների օգտին հետագայում նոր ծառայություններ ստանալու հնարավորության ակնկալիքով:
- պահանջել, համաձայնություն տալ ստանալու կամ ստանալ ցանկացած վճարում դրամական միջոցների կամ ցանկացած այլ արժեքների տեսքով, ինչպես նաև ցանկացած ֆինանսական կամ այլ օգուտ կամ առավելություն, եթե նման վճարումներ, օգուտներ կամ առավելություններ ստանալն ինքնին հանդիսանում է պաշտոնեական կամ օրենքով նախատեսված այլ պարտականությունների ոչ պատշաճ կատարում կամ հանդիսանում է նման պարտավորությունների ոչ պատշաճ կատարման համար վարձատրություն,
- հանդես գալ որպես կաշառակերության կամ առևտրային կաշառքի միջնորդ, այսինքն՝ անմիջականորեն կաշառքներ փոխանցել կաշառքը տվողի կամ կաշառքը ստացողի միջնորդությամբ կամ այլ կերպ օժանդակել կաշառքը տվողին և/կամ կաշառքը ստացողին հասնելու կամ իրականացնելու նրանց միջև համաձայնություն կաշառքը տալու կամ ստանալու կամ առևտրային կաշառք տալու վերաբերյալ:

6.1. Ղեկավարության առաքելությունը

Ընկերության ղեկավարությունը իրենց վարքագծով պետք է սահմանեն էթիկական վարքագծի չափանիշներ, իրենց անձնական օրինակով Աշխատակիցների մոտ ձևավորեն անհանդուրժողական վերաբերմունք կոռուպցիայի ցանկացած ձևերի և դրսևորումների նկատմամբ, ինչը պետք է դառնա Ընկերության կորպորատիվ մշակույթի և Աշխատակիցների ամենօրյա աշխատանքային պրակտիկայի անբաժանելի մասը:

Ընկերության ղեկավարությունը ծանոթացել են հակակոռուպցիոն համապատասխանության համակարգի բովանդակությանը, դրա գործարկման համար հատկացնում են անհրաժեշտ միջոցներ, ինչպես նաև իրականացնում են ընդհանուր վերահսկողություն համակարգի ներդրման, իրականացման կարգապահության և աշխատանքային արդյունավետության նկատմամբ:

6.2. Ղեկավարության հեղինակություն

Ընկերությունը խելամիտ ջանքեր է գործադրում, որպեսզի կանխարգելի Ընկերության ղեկավար պաշտոններում կամ կառավարման մարմիններում այնպիսի անձանց ընդգրկումը, ովքեր ներգրավված են եղել կամ ներգրավված են անօրինական գործունեության մեջ:

6.3. Քաղաքականության կիրառման հետևողականությունը

Ընկերությունը հետևողականորեն ապահովում է կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրության պահպանումը, հատկապես՝ գործնական էթիկայի սկզբունքների պահպանումը և, մասնավորապես, խրախուսում է Ընկերության Աշխատակիցներին և Ներկայացուցիչներին հետևել սույն Քաղաքականության պահպանման սկզբունքներին, ինչպես նաև սույն Քաղաքականության դրույթների ցանկացած խախտման դեպքում անփոփոխ կերպով կիրառում է պատժամիջոցներ:

6.4. Ռիսկերի պարբերական գնահատում և նվազեցում

Ընկերությունն ամեն տարի իրականացնում է միջոցառումներ՝ ուղղված կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանը, գնահատմանն ու վերագնահատմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով Ընկերության գործունեությանը և այդ գործունեության տարածաշրջանին բնորոշ ռիսկերին, ինչպես նաև հնարավոր խոցելի բիզնես գործընթացների ռիսկերին:

Ռիսկերի գնահատման և վերագնահատման արդյունքների հիման վրա Ընկերությունը մշակում և ներդնում է կոռուպցիայի դեմ պայքարի ընթացակարգ, որը խելամտորեն և համամասնորեն համապատասխանում է բացահայտված ռիսկերի մակարդակին և բնույթին:

6.5. Տեղեկացում և ուսուցում

Ընկերությունը բացահայտ կերպով հայտարարում է կոռուպցիայի անընդունելիության մասին և իր աշխատակիցներից, ստորաբաժանումների ղեկավարներից պահանջում է սույն Քաղաքականության սկզբունքների և պահանջների անվերապահ պահպանում:

Ընկերությունը մշտապես հետևում է Կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրության նորմատիվային պահանջների և իրավակիրառման պրակտիկայի բոլոր փոփոխություններին և պատշաճ ժամանակին տեղեկացնում է բոլոր շահագրգիռ անձանց համապատասխան փոփոխությունների և միտումների մասին:

Ընկերությունն իրականացնում և օժանդակում է ստորաբաժանումների ղեկավարների, աշխատակիցների, ուսուցման ծրագիրը Կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրության սկզբունքների և ստանդարտների վերաբերյալ հատուկ մշակված դասընթացների

համակարգի միջոցով: Դասընթացներն անց են կացվում Ընկերություն աշխատանքի ընդունվելիս, տարեկան կտրվածքով՝ էլեկտրոնային եղանակով, կանոնավոր կերպով՝ առկա եղանակով, սակայն ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության, այդ թվում՝ Կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրության կամ Ընկերության հակակոռուպցիոն ընթացակարգերի էական փոփոխությունների դեպքում:

Տեղեկացման և ուսուցման միջոցով Ընկերությունը նպաստում է կորպորատիվ մշակույթի մակարդակի, կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը և բիզնեսի վարման հարցում էթիկական նորմերի պահպանմանը:

6.6. Մոնիթորինգ և վերահսկողություն

Ընկերությունն իրականացնում է կոռուպցիայի կանխարգելման համար ներդրված ընթացակարգերի արդյունավետության մոնիթորինգ, վերահսկում է նման ընթացակարգերի պահպանումը և անհրաժեշտության դեպքում կատարելագործում է դրանք:


ՄոբիԴրամ-ը պետք է վերանայի եւ փոփոխի Հակակոռուպցիոն օրենսդրության ապահովման համապատասխանության քաղաքականությունը կիրառվող օրենսդրության, իրավապահ մարմինների պրակտիկայի, լավագույն միջազգային հակակոռուպցիոն պրակտիկայի փոփոխությունների դեպքում, եւ բիզնես գործունեության այլ արտաքին եւ ներքին գործոնների, որոնք կհանգեցնեն կոռուպցիոն ռիսկի մակարդակի եւ առկա քաղաքականությունների եւ ընթացակարգերի փոփոխությանը:

6.7. Պատասխանատու պաշտոնատար անձ և պրոֆիլային մասնագետների աշխատակազմ

Կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրությանը համապատասխանության ապահովման նպատակով Ընկերությունը պետք է նշանակի պաշտոնատար անձ, որը պետք է գտնվումի Ընկերության Գլխավոր Տնօրենի անմիջական ենթակայության տակ, պատասխանատու է հակակոռուպցիոն համապատասխանության համակարգի ներդրման և կատարելագործման համար: Համապատասխանության համակարգող ունի անհրաժեշտ փորձ և հմտություններ, ինչպես նաև ապահովված է այնպիսի անկախությամբ, իրավասություններով և ռեսուրսներով, որոնք բավարար են Կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրությանը համապատասխանության կորպորատիվ համակարգի արդյունավետ ներդրման և կատարելագործման համար:

6.8. Հաշվետվություններ և մասնագիտական կոլեգիալ մարմիններ

Համապատասխանության համակարգողը կանոնավոր կերպով, ինչպես նաև ըստ անհրաժեշտության, հաշվետվություն է ներկայացնում Ընկերության Գլխավոր Տնօրենին, Ընկերության Խորհրդին՝ համապատասխանության ընթացակարգերի բացահայտված խախտումների, իրականացված ներքին հետաքննությունների, համապատասխանության ներքին վերահսկողությունների թույլ կողմերի և այդ

	<p align="center">Քաղաքականություն «Հակակոռուպցիոն օրենսդրության պահպանում»</p>	<p align="center">PL-MBD-020-2</p> <p align="center">Ներքին կիրառման համար</p>
---	--	---

կապակցությամբ ձեռնարկված միջոցների, ինչպես նաև համակարգի աշխատանքի և արդյունավետության ընդհանուր կարգավիճակի վերաբերյալ:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

7.1. Արգելք արտապայմանագրային համաձայնագրերի նկատմամբ

Ընկերությունն արգելում է իր անունից կամ իր շահերից ելնելով կնքել ցանկացած արտապայմանագրային համաձայնագրեր կապալառուների ցանկացած կատեգորիայի հետ, այդ թվում՝ ցանկացած բանավոր կամ գրավոր համաձայնություններ, որոնք ներառված չեն կապալառուի հետ հիմնական պայմանագրի կամ դրա հավելվածների դրույթների մեջ, կամ այլ տեսքով, սակայն չեն անցել Ընկերությունում համաձայնեցման ընդունված ստանդարտ ընթացակարգերը:

Ընկերության կողմից ընդունված գրավոր ձևով կնքված ցանկացած պայմանագիր կամ համաձայնագիր, այդ թվում՝ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող բոլոր հավելվածները, պետք է պարունակի այն պայմանների և համաձայնությունների ամբողջությունը, համաձայն որոնց կնքվում է նման պայմանագիրը կամ համաձայնագիրը:

7.2. Հակակոռուպցիոն դրույթ

Կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրությանը համապատասխանելու, ինչպես նաև կոռուպցիոն գործունեության մեջ Ընկերության ներգրավման հետևանքով պատասխանատվության ենթարկման ռիսկը նվազագույնին հասցնելու նպատակով համաձայն ընդհանուր կանոնի Ընկերությունը նախաձեռնում է հակակոռուպցիոն դրույթի ներառումը ցանկացած կնքվող պայմանագրում/համաձայնագրում:

8. ՆՎԵՐՆԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Համաձայն Կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրության այն նվերները, ինչպես նաև ներկայացուցչական ծախսերը, այդ թվում՝ գործնական հյուրասիրությունների համար նախատեսված ծախսերը, որոնք Աշխատակիցներն Ընկերության անունից կարող են կատարել այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց փոխարեն, կամ որոնք Աշխատակիցները՝ կապված Ընկերությունում իրենց աշխատանքի հետ, կարող են ստանալ այլ անձանցից կամ կազմակերպություններից, որոշակի հանգամանքներում կարող են մեկնաբանվել որպես անօրինական: Այդ կապակցությամբ ցանկացած նվեր և ներկայացուցչական ծախս պետք է համապատասխանի հետևյալ չափանիշների ամբողջությանը.

(1) ուղղակիորեն կապված լինել Ընկերության գործունեության օրինական նպատակի հետ, օրինակ՝ բիզնես նախագծերի ներկայացում կամ ավարտ,

ապրանքատեսակների կամ ծառայությունների առաջխաղացում, պայմանագրերի հաջող կատարում, կամ համընդհանուր ընդունված տոների հետ, ինչպիսիք են՝ Սուրբ Ծնունդ և Նոր Տարի, Կանանց միջազգային օր, հիշատակի օրեր, հոբելյաններ և այլն,

(2) լինել խելամիտ կերպով հիմնավորված, համաչափ և չհանդիսանալ ճոխության առարկա,

(3) չխոչընդոտել ստացողին կայացնելու անկողմնակալ և արդար որոշումներ՝ կապված իր ծառայողական կամ պաշտոնական իրավասությունների (պարտականությունների) հետ, մասնավորապես, սակայն չսահմանափակվելով, չտրամադրվել որևէ տեղեկատվություն, կողմնակալ մոտեցում ստանալու կամ այնպիսի հնարավորություններ տրամադրելու նպատակով, որոնք այլ պարագայում չէին տրամադրվի,

(4) չհանդիսանալ քողարկված պարզևատրում ծառայության, գործողության, անգործության, ամենաթողության, հովանավորության, իրավունքների տրամադրման նպատակով, գործարքի, համաձայնագրի, լիցենզիայի, թույլտվության և այլնի վերաբերյալ որոշակի որոշման կայացման նպատակով, կամ չհանդիսանալ փորձ՝ այլ անօրինական կամ ոչ պատշաճ նպատակով ազդելու ստացողի վրա,

(5) Ընկերության հեղինակության համար չստեղծել ռիսկեր նման նվերների կամ ներկայացուցչական ծախսերի մասին տեղեկատվության բացահայտման դեպքում,


(6) արգելված չլինել ստացողի նկատմամբ կիրառվող օրենսդրությամբ, ինչպես նաև այլ ընթացակարգերով և քաղաքականություններով,

(7) ստացողի համար չառաջացնել որևէ բարոյական պարտավորվածություն,

(8) չհակասել սույն Քաղաքականության, Գործնական վարքագծի և էթիկայի կանոնների, Ընկերության այլ ներքին փաստաթղթերի սկզբունքներին և պահանջներին, ինչպես նաև Կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրության նորմերին,

(9) անցնել Ընկերությունում ձևավորված համաձայնեցման բոլոր անհրաժեշտ ընթացակարգերը, տիրապետել դեկավարության կողմից տրամադրված լիազորություններին, ունենալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Նշված չափանիշները տարածվում են նաև Ընկերության անունից և/կամ վերջինիս հաշվին կազմակերպվող միջոցառումների ծախսերի վրա՝ ուղղված սպառողական ակտիվության խթանմանը, հաճախորդների ձեռքբերմանը, պահպանմանը, ինչպես նաև տարածվում են հասարակության, ՋԼՄ-ների, ներդրումային և մասնագիտական հանրության հետ հարաբերություններում Ընկերության ակտիվության դրսևորման համար կատարվող ծախսերի վրա:

	Քաղաքականություն «Հակակոռուպցիոն օրենսդրության պահպանում»	PL-MBD-020-2
		Ներքին կիրառման համար

Արգելվում է Ընկերության ղեկավարների, ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների անունից ցանկացած երրորդ անձանց տալ նվերներ կանխիկ կամ անկանխիկ դրամական միջոցների տեսքով, կամ դրանց համարժեք այլ արժույթով:

Վերը նշված արգելքը վերաբերում է բոլոր աշխատակիցների կողմից երրորդ անձանցի՞ծ ստացված նվերներին, Ընկերությունում իրենց պարտականությունների կատարման ընթացքում:

«Սոբիդրամ» ՓԲԸ-ում սահմանված կանոններն ու սահմանափակումները նվերներ տալու և ստանալու, ինչպես նաև ժամանցային միջոցառումների կազմակերպման և դրանցում մասնակցության նկատմամբ ներկայացված են «Նվերների և ժամանցային միջոցառումների մասին» հավելվածում (Հավելված 1):

9. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համաձայն սույն Քաղաքականության՝ Ընկերությունը չի ֆինանսավորում և որևէ այլ եղանակով չի աջակցում քաղաքական կուսակցություններին կամ դրանց անդամներին, ներառյալ՝ քաղաքական պաշտոնների հավակնորդ թեկնածուները, նրանց նախընտրական ծրագրերը կամ քաղաքական միջոցառումները, ինչպես նաև ցանկացած այլ քաղաքական կազմակերպությունների կամ շարժումների:

Միեւնույն ժամանակ, Ընկերությունը ճանաչում է իր աշխատակիցների իրավունքը քաղաքական գործունեության մեջ անձնական գործունեությամբ ներգրավված լինելու մասով՝ աշխատանքից ազատ ժամանակ, եթե այդպիսի մասնակցությունը.

- իրականացվում է աշխատողների անձնական հաշվին (առանց ընկերության միջոցների եւ ռեսուրսների օգտագործման);
- ասոցացված չէ Ընկերության եւ նրա գործունեության հետ;
- չի հակասում աշխատողների իրավունքներին եւ պարտականություններին Ընկերությունում աշխատելու ընթացքում:

10. ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՄ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ՀՕԳՈՒՏ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ

Ընկերության ղեկավարներին, ստորաբաժանումների ղեկավարներին և աշխատակիցներին արգելվում է ներգրավել կամ օգտագործել Ընկերության ներկայացուցիչներին, կամ այլ երրորդ անձանց այնպիսի գործունեության իրականացման մեջ, որը հակասում է սույն Քաղաքականության սկզբունքներին և պահանջներին կամ Կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրությանը:

Ընկերության ղեկավարներին, ստորաբաժանումների ղեկավարներին և աշխատակիցներին արգելվում է կատարել վճարումներ հոգուտ Ընկերության ներկայացուցիչների, համատեղ ձեռնարկությունների կամ այլ երրորդ անձանց, եթե մեծ հավանականությամբ հայտնի է (կամ պետք է հայտնի լինի), որ տվյալ վճարումն ամբողջությամբ կամ դրա մի մասն օգտագործվելու է կոռուպցիոն նպատակներով:

11. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՈՒՄ

Բոլոր ֆինանսական գործարքները, հաշվապահական հաշվառման գրանցումներն ու մուտքագրումները պետք է հավաստի կերպով և բավականաչափ մանրամասն արտացոլվեն Ընկերության հաշվապահական հաշվետվություններում, ձևակերպվեն փաստաթղթերով և հասանելի լինեն ստուգման համար:

Ընկերությունում գործում են ներքին ֆինանսական վերահսկողություն ընթացակարգեր, որոնց նպատակն է ապահովել հետևյալը.


- (1) բոլոր ֆինանսական գործարքների իրականացում Ղեկավարության ընդհանուր կամ հատուկ թույլտվությամբ,
- (2) հաշվապահական գրառումների իրականացում այնքան հստակ և մանրամասն ձևով, որ հնարավոր լինի կազմել կիրառվող հաշվապահական (ֆինանսական) ստանդարտներին համապատասխան հաշվետվություններ,
- (3) ակտիվների տնօրինման իրավունքի տրամադրում միայն Ղեկավարության ընդհանուր կամ հատուկ թույլտվությամբ,
- (4) ակտիվների արժեքի և կազմի վերաբերյալ հաշվապահական հաշվառման գրանցումների կանոնավոր կերպով համադրում փաստացի արժեքի և կազմի հետ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան միջոցների ձեռնարկում:

Ընկերությունը նշանակել է աշխատակիցներ, ում անմիջական պարտականությունն է կիրառվող օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ամբողջական և հավաստի հաշվապահական հաշվետվությունների պատրաստումը և տրամադրումը:

Ներքին ֆինանսական վերահսկողության ընթացակարգերի խախտումը կամ խախտման փորձը, Ընկերության հաշվապահական հաշվետվությունների աղավաղումը կամ կեղծումը խստորեն արգելվում է և հանդիսանում է համապատասխան օրենսդրության խախտում:

12. ԱՌԻԴԻՏ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունում կանոնավոր կերպով իրականացվում է ֆինանսատնտեսական գործունեության ներքին աուդիտ բաժնետեր կազմակերպության կողմից նշանակված

	<p align="center">Քաղաքականություն «Հակակոռուպցիոն օրենսդրության պահպանում»</p>	<p align="center">PL-MBD-020-2</p> <p align="center">Ներքին կիրառման համար</p>
---	--	---

վերահսկչի կողմից և արտաքին աուդիտ՝ անկախ երրորդ կազմակերպության կողմից, ինչպես նաև իրականացվում է անընդմեջ վերահսկողություն հաշվապահական հաշվետվություններում բոլոր տնտեսական գործարքների ամբողջական և ճշգրիտ արտացոլման նկատմամբ, ինչպես նաև կիրառվող օրենսդրության և Ընկերության ներքին նորմատիվային իրավական ակտերի պահանջների պահպանման, այդ թվում՝ սույն Քաղաքականությամբ սահմանված սկզբունքների և պահանջների պահպանման նկատմամբ:


13. ԾԱՆՈՒՑՈՒՄ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընկերությունը ապահովում է Թեժ գծի միջոցով ստացված բոլոր հաղորդագրությունների օբյեկտիվ եւ ժամանակին քննարկում եւ հաղորդագրությունը ուղարկած անձի գաղտնիությունը երաշխավորում է, ով տրամադրել է իրական եւ հուսալի տեղեկություններ խախտումի վերաբերյալ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Եթե Ընկերության ցանկացած Աշխատակցին, անկախ զբաղեցրած պաշտոնից, Ընկերության ղեկավարներին և ստորաբաժանումների ղեկավարներին հայտնի են դարձել սույն Քաղաքականության և/կամ Կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրության խախտման կամ նման խախտման հակման վերաբերյալ փաստեր (կամ դրանք մատնանշող նախանշաններ), որոնք կատարվել են Ընկերության Աշխատակիցների, Ղեկավարների և ստորաբաժանումների ղեկավարների կամ երրորդ անձանց կողմից, պարտավոր են այդ մասին անհապաղ հայտնել հետևյալ եղանակներից որևէ մեկով.

- (1) «ՄՏՍ Արմենիա ՓԲԸ» Ընկերության «Միասնական թեժ գծի» միջոցով կամ hotline@mts.am հասցեով հաղորդագրություն ուղարկելով (Կառավարման, ռիսկերի և ներքին վերահսկողության վաչրության գիծ), այդ թվում՝ անանուն (էլեկտրոնային փոստի արտաքին հասցեից),
- (2) ցանկացած մակարդակի անմիջական ղեկավարին կամ այն դեպքում, եթե հաղորդագրությունը վերաբերում է անմիջական ղեկավարի գործողություններին, ավելի բարձր մակարդակի ղեկավարին,
- (3) Համապատասխանության համակարգողին:

Ընկերությունը պարտավորվում է իր իրավասությունների շրջանակներում ապահովել սույն Քաղաքականության և/կամ Կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրության դրույթների խախտման մասին կամ այդպիսի խախտումների կասկածի մասին բարեխղճորեն հայտնած Աշխատակիցների պաշտպանությունը հետապնդումներից կամ ցանկացած այլ տեսակի խտրականություններից այն անձի կողմից, ում դեմ ներկայացվել է հաղորդագրությունը:

	<p align="center">Քաղաքականություն «Հակակոռուպցիոն օրենսդրության պահպանում»</p>	<p align="center">PL-MBD-020-2</p> <p align="center">Ներքին կիրառման համար</p>
---	--	---

Միննույն ժամանակ Ընկերությունը երաշխավորում է, որ ոչ մի Աշխատակից Ընկերության կողմից չի ենթարկվի պատժամիջոցների (այդ թվում՝ աշխատանքից ազատում, պաշտոնի իջեցում, պարզևավճարից զրկում և այլն), եթե նա բարեխղճորեն հայտնել է ենթադրյալ կոռուպցիայի փաստի մասին կամ եթե հրաժարվել է տալ կամ վերցնել կաշառք, տալ առևտրային կաշառք կամ միջնորդ հանդիսանալ կաշառակերության մեջ, նույնիսկ եթե նման հրաժարման արդյունքում Ընկերությունն ունեցել է բացթողնված օգուտ կամ չի ստացել առևտրային կամ մրցակցային առավելություն:

Ընկերության կողմից պատժամիջոցների կիրառումից հրաժարվելու երաշխիքը չի տարածվում մեղավոր Աշխատակիցների վրա, ինչպես նաև այն դեպքերի վրա, երբ Ընկերության ներքին հետաքննության արդյունքում ապացուցվել է, որ համապատասխան հաղորդագրությունը եղել է միտումնավոր խաբեություն, զրպարտություն կամ սուտ վկայություն:

14. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Քանի որ Ընկերությունն իր ղեկավարների, ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների և իր հետ կապված այլ անձանց կոռուպցիոն գործունեության մեջ մասնակցություն ունենալու համար կարող է ենթարկվել պատժամիջոցների, ապա կոռուպցիայի յուրաքանչյուր հիմնավոր կասկածի կամ հաստատված փաստի հիման վրա կիրականացվի ներքին հետաքննություն համաձայն Ընկերության ներքին իրավական ակտերի, որոնք սահմանում են նման հետաքննությունների նախաձեռնման և անցկացման կարգը կիրառվող օրենսդրությամբ թույլատրվող շրջանակներում:

Սույն Քաղաքականության և Կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրության պահանջների խախտման մեջ մեղավոր անձինք կարող են Ընկերության, իրավապահ մարմինների կամ այլ անձանց նախաձեռնությամբ ենթարկվել կարգապահական, վարչական, քաղաքացիաիրավական կամ քրեական պատասխանատվության Ընկերության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով, աշխատանքային պայմանագրերով նախատեսված կարգով և հիմքերով, ինչպես նաև համապատասխան դեպքերում և անհրաժեշտ հիմքերի առկայության պարագայում՝ համաձայն Կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրության և այլ նման օտարերկրյա իրավական ակտերի հիման վրա:

15. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

Համապատասխանության համակարգողը հանդիսանում է սույն Քաղաքականության, ինչպես նաև Ընկերության հակակոռուպցիոն համապատասխանության համակարգի մշակման, ներդրման, բարելավման և մոնիթորինգի պատասխանատուն:

Ընկերության ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ընդհանուր առմամբ հակակոռուպցիոն համապատասխանության կորպորատիվ համակարգի պահպանման և արդյունավետության համար, ինչպես նաև իր ֆունկցիոնալ իրավասությունների

շրջանակներում հակակոռուպցիոն համապատասխանության համակարգի ներդրման, գործարկման վերահսկողության և ընթացակարգերի իրականացման համար:

Ընկերության Ղեկավարները, ստորաբաժանումների ղեկավարներն և Ընկերության աշխատակիցներն անկախ իրենց զբաղեցրած պաշտոնից անձնական պատասխանատվություն են կրում սույն Քաղաքականության և Կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրության սկզբունքների և պահանջների պահպանման, ինչպես նաև այդ սկզբունքներն ու պահանջները խախտող իրենց ենթակաների գործողության (անգործության) համար:

16. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Եթե որևէ Աշխատակցի մոտ առաջանում են հարցեր Սույն Քաղաքականության բովանդակության, դրա որևէ դրույթի մեկնաբանության, սույն Քաղաքականությամբ սահմանված սկզբունքների և համապատասխանության ընթացակարգերի իրականացման վերաբերյալ, ներառյալ՝ նման սկզբունքների և ընթացակարգերի կիրառելիությունը այս կամ այն իրավիճակում կամ Ընկերության բիզնես գործընթացներում, ինչպես նաև եթե առաջանում են կասկածներ իր գործողությունների օրինականության կամ աշխատանքային էթիկայի վերաբերյալ, Աշխատակիցը խորհրդատվության և պարզաբանումների համար կարող է դիմել Համապատասխանության համակարգողին:


Համապատասխանության գծով համակարգողը մանրակրկիտ վերլուծում է իրավիճակը եւ անհապաղ աշխատողին տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն եւ խորհրդատվություն (ոչ ավել, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում):

Ընկերության հակակոռուպցիոն համապատասխանության համակարգի ընթացակարգերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը, հաճախ տրվող հարցերի պատասխանները, ինչպես նաև հակակոռուպցիոն դրույթի տեքստը տեղադրված են Ընկերության Միասնական տեղեկատվական պորտալի Տեղեկատվություն Ընկերության վերաբերյալ/Համապատասխանություն և գործնական էթիկա բաժնում:

17. ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀՂՈՒՄՆԵՐ

17.1. Արտաքին փաստաթղթեր

№	Փաստաթղթի անվանում	Հղում ներքին պորտալում
	ՀՀ Քրեական օրենսգրքի 200, 201,1, 201,2, 201,3, 201,4, 312, 312,1, 312,2 և 313 հոդվածներ, 13,06,1996թ	
	Foreign Corrupt Practices Act 1977 (ԱՄՆ օրենք «Ձեղծարարությունների և կոռուպցիայի կանխարգելման արտերկրում գործող օրենք»՝ ընդունված ԱՄՆ Կոնգրեսի կողմից 1977թ.)	
	The Bribery Act 2010 (Մեծ Բրիտանիայի «Կաշառակերության մասին» օրենք՝ ընդունված Մեծ Բրիտանիայի Խորհրդարանի կողմից 2010թ.)	
	US Federal Sentencing Guidelines Manual, §8B2.1., 2010	

	Քաղաքականություն «Հակակոռուպցիոն օրենսդրության պահպանում»	PL-MBD-020-2
		Ներքին կիրառման համար

№	Փաստաթղթի անվանում	Հղում ներքին պորտալում
	The Bribery Act 2010 Guidance, 2011	
	A Resource Guide to the U.S. Foreign Corrupt Practices Act, 2012	
	Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության Կոնվենցիան (ՏՀԶԿ) միջազգային պաշտոնյաներին կաշառելու դեմ պայքարի միջազգային առևտրային գործարքներ կնքելու նպատակով, 1997 թ	
	ՄԱԿ-ի կաշառակերության դեմ պայքարի Կոնվենցիա, 20013 թ	
	Կաշառակերության նկատմամբ քրեական պատասխանատվության Կոնվենցիա, 1999 թ	

17.2. Ներքին նորմատիվային և կանոնակարգող փաստաթղթեր


№	ՆՓ-ի համար կամ ԿՓ-ի տեսակ, ԿՓ-ի համար, ԿՓ-ի ամսաթիվ	Փաստաթղթի անվանում
1		

18. ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿՈՒՄ

Տարբերակի համար	Տարբերակի ստեղծման ամսաթիվ	Մշակման համար պատասխանատու անձի ԱԱՀ	Փաստաթղթի փոփոխությունների հակիրճ նկարագրություն
1.0.	09.08.18	Համապատասխանության գծով համակարգող Ջարուհի Պետրոսյան	Փաստաթղթի ադապտացում
1.0	16.10.2018	Համապատասխանության գծով համակարգող Ջարուհի Պետրոսյան	Հավելված 1-ի փոփոխություն
2.0.	21.06.2019	Համապատասխանության գծով համակարգող Ջարուհի Պետրոսյան	Փաստաթղթի վերանայում

19. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելվածների փոփոխությունը համաձայնեցվում և հաստատվում է պարզեցված եղանակով: Հավելվածները ներկայացված են առանձին ֆայլի տեսքով և հանդիսանում են սույն փաստաթղթի անբաժանելի մասը:

	Քաղաքականություն «Հակակոռուպցիոն օրենսդրության պահպանում»	PL-MBD-020-2
		Ներքին կիրառման համար

Հավելված 1. Դրույթ «Սոբիդրամ» ՓԲԸ-ում նվերների և ժամանցային միջոցառումների վերաբերյալ»

Հավելված 1.1 «Գրանցամատյան»

	Պաշտոն
Հաստատված է	Գլխավոր տնօրեն
Համաձայնեցված է	Համապատասխանության համակարգող